կը հանդիպինք Յովհաննէս Կաթողիկոսի պատմութեան մէջ, ուր կ՚ըսուի· «Նկարակերտ կարմուածս բազմականաց կարմրութեամբ որդանայ»(60)։ Ուրեմն տարակոյս չկայ թէ հին հայկական գորգերը զարդարուած էին Որդանի գոյնով։ Միջազգային հեղինակութիւն մը, Տր· Ֆ· Ռ· Մարդին, Որդանը հայկական գորգերու վաճառանիշը կը նկատէ։

Անտարակոյս կարմիր ներկելու տարբեր նիւթեր եւ ձեւեր ալ կան Հայաստանի մէջ։ Հոս կը ներկայացնեմ Շատախի որդանի կերպը· «կարմիր ներկելու համար կանձերը նախ շպում են, այսինքն մի կէս ժամ ձգում են եռացող ջրի մէջ, ամէն մի նուկի կանձի համար 20 դրամ շիպ աւելացնելով։ Կանձերը հանելիս լուանում, այլ ուղղակի չորացնում են։ Ապա ամէն մի նուկի կանձի համար վերցրնում 20 դրամ յորդան կարմիր (կրմրդ), 40 դրամ թորթիկ (սպիտակ կամ կարմիր գինու մրուր), նախ առանձին առանձին եւ ապա միասին ազում են, յետոյ տաք ջրով շաղախում եւ ածում եռացող ջրի մէջ, այս բազադրութեան մէջ ձգում են շպած կանձերը ու թողնում եռալու 10–12 ժամ։ Այս ջրից մի կաթիլ առնում են աղունդի վրայ եւ դիտում, եթէ ներկի մասերն այլեւս նկատելի չեն, ուրեմն ներկն ամբողջովին քաշուել է կանձերի մէջ՝ վերջիններս հանում են լուանում եւ չորացնում։ Այսպէսով ստացւում է կարմիր գոյնը»։

«Այս կարմրագոյն կանձերը ձգում են վերեւ նկարագրուած գլուզի (կապոյտի) բաղադրութեան մէջ, ուր 2–3 ժամ մնալով դառնում են մանիշակագոյն»(61)։

Որդանին նման պատմական ներկ մըն է նաեւ լայքան (դայքա, լաք· Ստեփանոս Սիւնեցի կը կոչէ լոքօ), որ տեսակ իմն է դեղոյ որ իբր զչաղ ի ցրտութենէ օդոյն ինքնէ ի վերայ տերեւոց եւ սառի (որ լինի ի Հնդիկս ի միում տեղւոջ եւ էթ) եւ գոյանայ ներկ իմն կարմիր, որով ներկանեն զմետաքս եւ զկտաւեղէնս, որ է գոյն անել, զոր եւ ի գործ ածեն նկարիչք եւ պատկերահանք, որ Թուրք եւ Արապ· ասի լիւք» (Պարսկերէն բառարան Գէորգ դպրի)։

Գոնէ Քրիստոսէ դար ու կէս առաջ ծանօթ էր հայոց այս կարմրաներկը, լայքան։ Զինական «Հան Տան մեծագոյն ինքնակալին Վու-Դիի ժամանակ (Ք· առաջ 140–86) Հոները արեւելեան Թուրքեստանէն դուրս՝ դէպի հիւսիս՝ քշուած կամ հպատակեցուած էին։ Դարիմի հունը խոնուած էր Զինացի գաղթականներով, եւ կարաւաններ դէպի արեւմուտք կ՚երթային բեռցած մետաքսով, լայքայով եւ ճէյտով (տեսակ մը թանկագին քար), ատոնք փոխանակելու համար Հա-

(60) Երուսաղէմ, 1867, էջ 250։ Հ· Ղ· Ալիշան կ՚ըսէ որ «ամենէն ընտիր եւ ամենէն հին ճանչցուած որդան կարմրոյ, հոչակեալ իր չառափայլ գունով, որով թագաւորաց ծիրանիք եւ հրովարտակք կը ներկուէին, զոր կը յիշէ եւ Դիոսկորիտէս»։ (Յուշիկք· Բ հրատ· Բ մաս, էջ 52)։

(61) Ազգ· Հանդ· 1913, թիւ, 2, էջ 195։